

ԼՈՒՍԱԲԱՑԻՑ ԱՌԱՋ ԽԱՎԱՐԸ ԹԱՆՁՐԱՆՈՒՄ Է *

Բանալի բառեր – պատերազմ, արտաքին քննուներ, Նախիջևան, Արցախ, Սյունիք, խաղաղության սուրբեկտ, կռվելու կամք, ցուցցվանգ:

Քանի որ 2022 թվականի ընթացքում Հայաստանը ռուս-թուրքական առևտրի հարթակից վերածվել էր թուրք-ադրբեջանական միակողմանի քայլերի ասպարեզի, 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարագիրն աստիճանաբար սկսել էր ծառայել մեր տարածաշրջանում **Մեծ Թուրանի միջուկը** ձևավորելու ծրագրերին:

Պատճառն այն է, որ Արցախի համատեղ զավթման, Հայաստանի միջանցքայնացման ու ապաստույթկտայնացման հարցերում Թուրքիայի և Ադրբեջանի գործակիցը դարձած Ռուսաստանն Ուկրաինայում ընկել էր այն նույն փոսը, որը 2020 թվականին փորել էր մեզ համար: Եթե 2020 թվականին Մոսկվան էր մեզ ստիպում հեռանալ Ակնայից ու Քարվաճառից, ապա 2022 թվականին Անկարան էր նրան ստիպում ձնշել հայերին՝ Բերձորը զիջելու համար: Բայց երբ 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարագրով նախատեսված եռամյա ժամկետից շուտ հանձնվեց Բերձորը, երկու շաբաթ անց հարձակում սկսվեց Հայաստանի սահմանների երկայնքով: Դա ցույց տվեց, որ Ուկրաինայում անհաջողություններ գրանցող Ռուսաստանը Հարավային Կովկասում դարձել է Թուրքիայի ցանկությունների պատանդը, իսկ նրա «ԽՍՀՄ-2» նախագիծը ձախողվել է՝ ծիծաղի հետ նաև խղճահարություն առաջացնելով հակառակորդների շրջանում: Նման խղճահարությունը Միացյալ Նահանգների համար վերածվում էր լուրջ անհանգստության, քանզի Մոսկվայի հակաարևմտյան դոմինանտությունը սկսել էր նմանվել սադամյան վարչակարգի պահվածքին, որի կործանումից,

վէմ համահայկական հանդես, ԺԴ (Ի) տարի, թիվ 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2022

* Ընդունվել է տպագրության 31.12.2022:

ինչպես գիտենք, շահեց ոչ թե ԱՄՆ-ն, այլ Իրանը: Նույնը «չինական շահումի» չվերածելու Վաշինգտոնի մտահոգության առարկայացման հետևանքով անցած աշնանը Ուկրաինան սկսել էր զգալ ԱՄՆ-ի կողմից գործի դրվող «կաթիլային լենդլիզի» ազդեցությունը: Որքան Կիևում շատ էին խոսում վերջնական հաղթանակի մասին, այնքան պարզ էր դառնում, որ Արևմուտքը տալիս է միայն այնքան զենք, որքան անհրաժեշտ է դիմադրելու, բայց ո՛չ հաղթելու համար:

Նման պայմաններում մեզ համար խորհրդանշական օրը՝ 2022 թ. նոյեմբերի 9-ին, անվտանգության հարցերով ԱՄՆ նախագահի խորհրդական **Զ. Սալիվանն** անսպասելիորեն հայտնվեց Կիևում՝ մեջտեղ բերելով Մոսկվայի հետ բանակցություններ սկսելու պահանջը: Մինչդեռ Ուկրաինայում ակնկալում էին ոչ թե Ռուսաստանի ձախողումը, այլ ջախջախումը պատերազմը հակառակորդի տարածք տեղափոխելու միջոցով: Սա չի նշանակում, որ ԱՄՆ-ն դադարեցնում է Ուկրաինային օգնության տրամադրումը, բայց նշանակում է, որ Չինաստանին հակակշռելու և թյուրքական տարերքը զսպելու հարցերում ուրվագծվում է ռուս-ամերիկյան մերձեցման հեռանկարը: Ամերիկյան ռազմավարության մեջ սկիզբ առած այս **ոչ միշտ տեսանելի, բայց էական տեղաշարժը** նման է ծանրաշարժ գնացքի արգելակների փորձարկմանը, ինչը վկայում է ոչ թե մոտալուտ կանգառի, այլ կանգնելու մտադրության մասին: Ուստի տարեվերջին Ուկրաինայի ռազմական հետախուզության ղեկավար Կիրիլ Բուդանովն արձանագրում էր. «Իրավիճակը կախվել է օդում: Շարժում չկա: Մենք չենք կարող պարտության մատնել նրանց... Բայց նրանք էլ մեզ չեն կարող»¹: Ավելին՝ երբ ռուսական բանակը դիմեց հրթիռների միջոցով Ուկրաինայի ենթակառուցվածքների ոչնչացմանը, Միացյալ Նահանգները փոխզիջումային առաջարկ ներկայացրեց Մոսկվային մինչև 2022 թ. փետրվարի 24-ն ունեցած դիրքերը վերադառնալու մասին...

Ու թեև Վ. Պուտինը նորից է համառում՝ ավելին ստանալու ակնկալիքով, բայց քանի որ Ռուսաստանի վերջնական պարտությունն ավելի մեծ սպառնալիքներ է պարունակում ԱՄՆ-ի համար, քան նրանից բխող վտանգների հանրագումարը, 2022 թ. դեկտեմբերի 16-ին ասպարեզ նետվեց նաև Հենրի Բիսինջերի՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի կիրառման առաջարկը. «Այն տարածքներում, **որոնք**

1 <https://www.gazeta.ru/army/2022/12/29/16019407.shtml> (մուտք՝ 13.12.2022).

դարերի ընթացքում բազմիցս ձեռքից ձեռք են անցել, կարելի է անցկացնել ինքնորոշման հանրաքվեներ միջազգային հանրության վերահսկողության ներքո (ընդգծումը մերն է- Գ. Խ.)»²:

Ուկրաինական պատերազմի ակտիվ փուլի ավարտի այս նախանշանները չէին կարող չանհանգստացնել մեր ռիսերիմ հարևաններին, որոնց՝ 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսված Արցախը խեղդելու գործողությունն իրականում Բաքվում նկատվող խուճապի արտահայտություն է: Դրան զուգահեռ սկիզբ են առել նաև մեր հայրենիքի **Նախիջևանյան հատվածի** իրավական կարգավիճակը փոխելու տենդագին քայլերը: Բաքվում լավ են հասկանում, որ դեռևս իրենց ընդառաջող պոտինյան Ռուսաստանն անգամ հուսալի գործընկեր չէ, քանի որ Մոսկվան սոսկ **պատանդառում է** Արցախն ու նրա միջոցով Հայաստանը: Ուստի տարածաշրջանով շահագրգիռ արտաքին երեք բևեռների հետ միաժամանակյա առևտրի միջոցով մեր հակառակորդները փորձում են ապահովել միանգամից **երեք հայկական թիրախների** խոցումը: Այդ արտաքին բևեռներն են Արևմուտքը (ավելի կոնկրետ՝ ԱՄՆ-ն), Ռուսաստանը և Իրանը, իսկ թիրախները՝ Հայաստանի երեք երկրամասերը՝ Նախիջևանը, Սյունիքը և Արցախը:

Առաջին՝ արևմտյան (հիմնականում՝ ամերիկյան) դաշտում Անկարան ու Բաքուն, օգտվելով այն փաստից, որ Արցախում Ռուսաստանից ունեցած կախվածության պատճառով Հայաստանը զգուշավոր դիրքորոշում է որդեգրել խաղաղության պայմանագրի ստորագրման հարցում, իրենց «բնապահպանների»՝ Բերձորի միջանցք ներխուժելու փաստն Արևմուտքում մատուցում են որպես Հայաստանին խաղաղության պայմանագրի արևմտյան տարբերակը պարտադրելու միջոց: Բայց նման պայմանագրի շուտափույթ կնքման հեռանկարը սպառնալիք է ոչ այնքան Արցախի, որքան Նախիջևանի համար, քանի որ դրանից հետո էլ Արևմուտքն ունենալու է Արցախի հարցը վերաբացելու կոսովյան տարբերակը: 1921 թ. Մոսկվայի ու Կարսի պայմանագրերում ամրագրված Նախիջևանի Ինքնավար Հանրապետության պետական ինստիտուտները Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցիչներով փոխարինելու քայլերը կապված են նաև այդ պայմանագրերն անվավեր ճանաչելու Ռուսաստանի հայ համայն-

2 Как избежать еще одной мировой войны. Генри Киссинджер назвал три варианта урегулирования украинского кризиса, “The Spectator”, Великобритания, <https://inosmi.ru/20221216/kissindzher-258926625.html> (մուտք 10.12.2022).

քի փորձերի հետ: Ու թեև դրանք առերես կասեցվել են երկրի արտգործնախարարության կողմից, բայց, մտնելով դատարան, կախվել են օդում: Ուրեմն Բաքուն փորձում է շանտաժի միջոցով արագորեն փակել Նախիջևանի կարգավիճակի հարցը:

Երկրորդ՝ ուսական դաշտում Անկարան ու Բաքուն ցանկանում են օգտագործել էներգակիրների արտահանման հարցում Ռուսաստանի ժամանակավոր կախվածության փաստը՝ շրջափակման միջոցով հայկական կողմերին առավելագույնս ընկճելու համար: Որովհետև Ռուսաստանի ղեկավարության աջակցությամբ 2020 թվականին Լեռնային Ղարաբաղի մեծ մասին տիրացած Բաքվի բռնապետի շահերն **Արցախի տարածքում** հակասության մեջ են Մոսկվայի հեռահար նպատակների հետ: Քանզի գիջել Արցախից մնացած հատվածը Ռուսաստանի համար նշանակում է կորցնել ոչ միայն իր փոքր, այլև **մեծ պատանդին՝** Հայաստանը, ուստի Ադրբեջանի հանդեպ նրա «գազատրանզիտային գսպվածությունը» կորցնելու է իր հրատապությունը Յամալից դեպի Եվրոպա ձգվող խորհրդային հին գազատարի գործարկման հետևանքով: Իսկ Բաքուն մնալու է մենակ իրեն արդեն «սև երախտամոռության» մեջ մեղադրող Ռուսաստանի, Հայաստանի և Իրանի դեմ հանդիման:

Երրորդ՝ իրանական դաշտում Անկարան ու Բաքուն երկակի խաղ են խաղում, այն է՝ մի կողմից փորձում են Իրանում ակտիվացնել պանթյուրքական շրջանակներին, իսկ մյուս կողմից սկսում են Իսրայելի, Պակիստանի ու Թուրքիայի հակաիրանյան ռազմարշավի նախապատրաստումը: Պատահական չէ, որ Իսրայելի վարչապետի աթոռին է վերադարձել 2020 թ. արցախյան երկրորդ պատերազմում Ադրբեջանի թիկունքն ապահոված Բենիամին Նաթանյահուն: Բայց չմոռանանք, որ Իսրայել-Թուրքիա-Պակիստան-Ադրբեջան դաշինքի վերագործարկման փորձերն ուղղված են նաև Հնդկաստան-Իրան-Հայաստան-Վրաստան-Եվրոպա երթուղով «Հարավ-Հյուսիս» միջանցքի ստեղծման ամերիկյան ծրագրերի դեմ: Ավելին՝ Թուրքիայի աճող նկրտումները սանձելու համար սկսվել է նաև Ֆրանսիա-Եգիպտոս-Հունաստան-Կիպրոս **հակաթուրքական դաշինքի** ձևավորումը, որի թիկունքին կարող է կանգնել ԱՄՆ-ն: Նման պայմաններում Անկարան ու Բաքուն խիստ շտապում են երեք դաշտերում ծավալվող իրենց միաժամանակյա խաղերն **ընդհանուր հակահայ ոսպնյակի մեջ միավորելու և մեր դեմ ուղղելու**

հարցում: Այսինքն՝ **արևմտյան դաշտում** հանդես են գալիս որպես խաղաղության պայմանագրի ստորագրումով Լեռնային Ղարաբաղից ռուսներին դուրս մղելու դրոշակակիրներ, **ռուսական դաշտում** առաջ են մղում «Զանգեզուրի միջանցքի» բացումով Թուրքիայի հետ Ռուսաստանի ցամաքային կապը ապահովելու իրենց հորինած խնդիրը, իսկ **ահա իրանական դաշտից** հնարավոր հակազդեցությունը չեզոքացնելու համար, փակելով Բերձորի միջանցքը, ցանկանում են «Զանգեզուրի միջանցքի» հետ «փոխանակում» առաջարկել Հայաստանին, այն է՝ Բերձորի միջանցքն օգտագործելու «հումանիտար խնդրի» դիմաց լուծել մեկ այլ «հումանիտար խնդիր»՝ ադրբեջանցի «փախստականներ» տեղակայել Զանգեզուրը Նախիջևանին կապող ճանապարհի երկայնքով:

Դրա համար 2022 թ. դեկտեմբերի 30-ին Իլհամ Ալիևը փորձեց միջազգային օրակարգ մտցնել «Արևմտյան Ադրբեջանից» ու մանավանդ Զանգեզուրից հեռացած ադրբեջանցիների իրավունքների հարցը: Նրա խոսնակի դերը կատարող **հայտնի կայքի** մեկնաբանմամբ՝ թեև Ադրբեջանը կաշկանդված է Հայաստանի տարածքում ուժի կիրառման հարցում, բայց «Ուկրաինայում պատերազմի պայմաններում սահմանափակ տարածական միջանցքի երկայնքով զինված ուժեր տեղակայելու գործողությունը չի դառնա բավարար հիմք Բաքվի հանդեպ քննադատական ձնշման համար, որը համեմատելի կլինի այն ձնշման հետ, որն այժմ գործադրում է եվրոատլանտյան հանրությունը Ռուսաստանի հանդեպ»³: Այդ նպատակով Ադրբեջանում պատրաստ են դիմանալու անգամ Արևմուտքի տնտեսական պատժամիջոցներին, քանի որ «Բաքվի առևտրատնտեսական հարաբերությունների ճնշող մասը ձևավորվում է Անկարա-Մոսկվա-Պարսից ծոցի երկրներ-ԱՊՀ քառանկյունում»⁴:

Օգտվելով Ուկրաինայում Ռուսաստանի «խրված» լինելու փաստից՝ Բաքուն կարող է անգամ ազդեսիա սկսել Սյունիքի հարավում և այն բնակեցնել «փախստականներով»՝ «միջանցքների փոխանակումը» ուժով պարտադրելու համար: Իսկ Իրանի՝ ռազմական գործողությունների մեջ մտնելու հեռանկարը չեզոքացնելու համար առաջիկայում նրան սպառնալու է Իսրայել-Թուրքիա-Պակիստան դաշինքի

3 Гусейнов И., Новый этап национальной борьбы: Западный Азербайджан, haqqin.az, 30 декабря 2022.

4 Նույն տեղում:

հակազդեցությամբ: Սա նշանակում է, որ Հայաստանի իշխանությունների որդեգրած ջայլամի կեցվածքը մեզ չի փրկելու, որովհետև տարածաշրջանային մեծ պատերազմն անխուսափելի է. խնդիրը միայն դրա **ժամկետներն** են, որոնց հստակեցման համար հարկ է ձշտել Թուրքիայի ընտրական մարաթոնում «նորին մեծություն սուլթանի» որդեգրած մարտավարությունը: Քանի որ իր հավանական մրցակից, Անկարայի քաղաքապետ **Մանսուր Յավաշի** թիկունքին կանգնած է **խորքային պետությունը**, գործը քվեարկությանը հասնելու պարագայում Ռ. Էրդողանը պարտվելու է: Ուստի նա առայժմ ձգում է Ի. Ալիևի սանձերը մինչ այն պահը, երբ Թուրքիայում իր իշխանությունը պահելու միակ հնարավորությունը կմնա պատերազմը, որը, սակայն, կարող է լինել նաև Արևմուտքի քողարկված պարտադրանքը: Բանն այն է, որ փետրվարին բռնկվելու է Լիբիան, որտեղ Թուրքիայի դեմ է դուրս գալու ոչ միայն ֆեդմարշալ Խալիֆա Հաֆթարը, այլև Եգիպտոսը, Հունաստանը և վերջինիս թիկունքին կանգնած Ֆրանսիան: Մինչ այդ Եվրամիությունը կլուծի իր գազային խնդիրները, իսկ սիբիրյան հին գազատարի գործարկումով Ռուսաստանը կդադարեցնի Ադրբեջանի հետ «համատեղ մաքսանենգությունը»: Ուստի իր ձմեռային հարձակման ճակատը նեղացնելու և պատերազմը «մարտական ոչ ոքի»-ով ավարտելու համար Մոսկվային մնալու է ոչ թե Թուրքիայի, այլ ԱՄՆ-ի հետ փոխզիջում փնտրելու տարբերակը, որը, ի տարբերություն Անկարայի, **Եվրասիական անտառի տիրակալին** փոխարինելու ցանկություն չունի:

Նման իրավիճակում իզուր է Հայաստանի ղեկավարությունը արդարություն պահանջող գոհի կեցվածքով խաղաղություն ակնկալում մեր դահիճներից: Դրանով նա մեզ զրկում է խաղաղության սուբյեկտ դառնալու հեռանկարից, ինչը աշխարհի հզորները երաշխավորելու են միայն **հակաթուրք պատնեշը** պաշտպանելու պարագայում: Խաղաղությունը պատերազմի ածանցյալն է, որը կերտվում է **զոհի հոգեվիճակի** հաղթահարման և դահիճին իբրև թշնամի դիտարկելու պարագայում⁵: Ուժերի հարաբերակցության մասին փաստարկը ներկա գլոբալացող դիմակայության պայմաններում հետին պլան է մղվել. խնդիրը կամքի առկայությունն է և ճիշտ կողմնորոշվելը: Հետարդիա-

5 Ավելի մանրամասն տե՛ս «ՎԷՄ»-ի ներկա համարում հրապարակվող **Դավիթ Ռ. Մոսիճյանի** «Խաղաղությունը որպես պատում և իրողություն» ուշագրավ ուսումնասիրության մեջ:

կանության պայմաններում խաղաղությունը հնարավոր է միայն որ պես նոր աշխարհակարգ, որին հասնելու համար պետք է պատրաստ լինել կռվին, որովհետև կռիվը հնարավորություն է, իսկ ինքնանպատակ խաղաղությունը՝ դանդաղ մահ:

Թանձրացող խավարի պայմաններում անհրաժեշտ է միասնականանալ ու պատրաստվել, քանզի Թուրքիայի թիրախավորմանը տանող տարեվերջյան զարգացումները Հայաստանի օգտին շրջվելու անկասելի միտում են դրսևորում: 2023 թվականը դառնալու է Արևմուտքի **հայաստանյան դիմաշրջումի** տարին, իսկ Ուկրաինայում ծուղակն ընկած Ռուսաստանը սեփական ոտքերին չկրակելու համար ստիպված է լինելու արևմտյան ձակաոր փոխարինել հարավայինով, որովհետև թուրքական ժամանակավոր խաբկանքի փոխարեն առաջ է գալու **իրանական միջանցքը** պաշտպանելու խնդիրը:

Ուստի ժամանակավորապես թանձրացող խավարում ներսից ամուր լինելու և Արցախն ամուր պահելու դեպքում 2023 թվականի գարնան-ամռան ամիսները կարող ենք վերածել 1923 թվականին Լոզանում «փակված» Հայկական հարցի վերաբացման արևաշող **լուսարացի**:

Խմբ.

THE MURK IS THICKENING UP BEFORE THE DAWN

Key words – war, external poles, Nakhichevan, Artsakh, Syunik, the subject of peace, will to fight, zugzwang.

Edit.

ПЕРЕД РАССВЕТОМ ТУМАН ЕЩЕ ГУЩЕ

Ключевые слова – война, внешние полюса, Нахичевань, Арцах, Сюник, субъект мира, воля к борьбе, цугцванг.

Ред.